ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունվարի 2025 թվականի N 85 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի N 1911-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» N 1911-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշմամբ հաստատված N 2 հավելվածի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրի՝

ա. «I. Արմավիրի տարածաշրջան» բաժնում ներկայացված Մեծամոր քաղաքի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. «Մեծամորի հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությունը և «Մեծամորի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը միաձուլման ձևով վերակազմակերպել՝ ստեղծելով «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն: Պոլիկլինիկայի նեղ մասնագիտական ծառայու-

թյուններն ինտեգրել Մեծամորի հիվանդանոցին, իսկ ստացիոնար ծառայությունները ենթարկել ներքին օպտիմալացման՝ միավորելով մեծահասակների և մանկական թերապևտիկ բաժանմունքները մեկ թերապևտիկ ծառայության մեջ 20 մահճակալով և կրճատելով մահճակալների թիվը՝ ըստ ստորև ներկայացված կառուցվածքի՝

Մեծամորի բժշկական կենտրոն	**Մահճակալների ներկա թիվը**	**Մահճակալների ներկա զբաղվածությունը**	**Մահճակալների առաջարկվող թիվը**
Թերապևտիկ՝ ներառյալ մանկականը	20 (10 մեծերի և 10 մանկական)	120%	20 (10 մեծերի և 10 մանկական)
Վիրաբուժական	15	26%	0
Էնդոկրինոլոգիական	30	32%	30
Ինֆեկցիոն	10	40%	10
Ընդամենը՝	**75**	**54.5%**	**60**

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

30.01.2025

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ